



ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ
ԵՎՐԱՍԻԱԴՈՔ

ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՍՑԵՆԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վայր: Բիլգի համալսարան, santralistanbul մասնաշենք

Ամսաթիվ: 1-13 հունիս 2015

Վերջնաժամկետ: 23/04/2015

Ինչպե՞ս է գաղափարը վերածվում նախագծի և ինչպե՞ս է նախագիծը վերածվում վավերագրական ֆիլմի սցենարի: Ինչպե՞ս կարող է երազանքների ֆիլմը իրականություն դառնալ: Սրանք են այն բնական խնդիրները, որոնց յուրաքանչյուր ֆիլմ ստեղծող պետք է առաջին հերթին լուծի կամ ամենաքիչը հստակեցնի:

Երկու ֆրանսիական կազմակերպություն՝ **Ecran Libre** և **Docmonde**, սկսած 2011 թվականից համագործակցում են Կենտրոնական Ասիայում, Կովկասում և Արևելյան Ռուսաստանում գործող կազմակերպությունների հետ (Kazakhfilms, Kyrgyzfilms, Arts Council of Mongolia և այլն)՝ կազմակերպելու համար դոկումենտալ ֆիլմերի վերաբերյալ աշխատաժողովներ և ներտարածաշրջանային համատեղ արտադրության հանդիպումներ ԵՎՐԱՍԻԱԴՈՔ-ի շրջանակներում: Այս աշխատաժողովները և հանդիպումները հնարավորություն են տալիս ընտրված կինոնախագծերին դառնալու **"Lumière d'Eurasie"** վավերագրական ֆիլմերի հավաքածուի մաս: Այսօր Lumière d'Eurasie-ի հավաքածուում արդեն հաշվառվում է 43 ֆիլմ (դրանց մի մասը դեռ արտադրական փուլում է):

ԵՎՐԱՍԻԱԴՈՔ-ի սցենարագրության դասընթացների 4-րդ տարում՝ **Ecran Libre** և **Docmonde** կազմակերպությունները հրավիրում են Թուրքիայի և Հայաստանի կինոգործիչներին երկու շաբաթ տևողությամբ վավերագրական ֆիլմերի զարգացման աշխատաժողովին, որը կկայանա Ստամբուլում՝ 2015 թվականի հունիսի 1-13-ը և որին կհաջորդի Հայաստանում համատեղ արտադրության հանդիպումը. այստեղ ներկա կգտնվեն Եվրոպացի և տեղական պրոդյուսերներ, հեռուստատեսությունների ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի գործընկերներն են՝ Թուրքիայում ֆրանսիական ինստիտուտը, Բիլգի համալսարանի հաղորդակցության ֆակուլտետը (Ստամբուլ), Անատոլիական ուսումնասիրությունների ֆրանսիական ինստիտուտը, Ստամբուլի մշակույթի և արվեստի ֆոնդը, Ոսկե Ծիրան միջազգային կինոպառատունը (Երևան), Անադոլու Քուլթուրը (Ստամբուլ) և Հայաստան-Թուրքիա կինոպատժումը:

Ծրագրի նպատակներն են՝

- Օգնել նրանց, ովքեր ցանկանում են զարգացնել վավերագրական ֆիլմարտադրության հանդեպ պրոֆեսիոնալ մոտեցում ուժեղ անձնական գեղարվեստական մոտեցմամբ:
- Ստեղծել կայուն մասնագիտական ցանց նշված տարածաշրջանների միջև, ինչպես նաև նշված տարածաշրջանների և Եվրոպայի միջև:

Մասնակցությունը անվճար է: Ճանապարհորդության, սննդի և կացության ծախսերը նույնպես հոգում են կազմակերպիչները:

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ ՏԵՍՆԵԼ ԱՏՈՐԵՒ:



Ուրվագիծը

Վեց հեղինակ-կինոգործիչներ՝ Հայաստանից և Թուրքիայից, 12 օրվա ընթացում կհյուրընկալվեն սցենարագրության կացարանում, նպատակ ունենալով

- Նյութ գրելու միջոցով պարզաբանել կինոյի այն խնդիրները, որոնք ֆիլմերի նախագծերի ստեղծմանն են հանգեցնում միաժամանակ ուսումնասիրելով արտադրության հնարավորությունները :
- Իրականացնել նրանց ֆիլմ-նախագծերի մանրամասն քննադատական վերլուծություն և զարգացնել իրական վավերագրական «պատմություն», որը ներկայացվելու է պրոդյուսերներին և/կամ հեռուստատեսության ներկայացուցիչներին՝ ծրագրին հաջորդող հատվածում Հայաստանում անցկացվելիք համատեղ արտադրության ժողովի ժամանակ:
- Սևագիր հոլովակների միջոցով վարժություններ կատարել:
- Կախված թեմայի խորը բացահայտմից՝ մինչև դրա ձևափոխումը իրական ֆիլմ պրոեկտի, թրեյնինգը նաև կենտրոնանալու է ապագա նախագծերի համար աշխատանքային մեթոդի ընտրության վրա:

Զևաչափը

4-րդ ԵՎՐԱՍԻԱԴՈԿ-ը տեղի է ունենալու 2015թ. Հունիսի 1-13-ը Ստամբուլում(Թուրքիա): Ծրագրի մենթորը լինելու է կինոգործիչ, պրոդյուսեր և թրեյներ Սամուել Օբինը :

Սամուել Օբին

էքրան լիբրի (Ecran Libre) ռեժիսոր և գեղարվեստական ղեկավար: 2009 թվականից սկսած Սամուելը վավերագրական ֆիլմերի թրեյնինգներ է անցկացնում Կենտրոնական Ասիայում: Նրա գեղարվեստական աշխատանքները բացահայտում են խաղարկային, վավերագրական, ինչպես նաև տեսողական և պատմողական արվեստների նոր տեսակները, որոնք առնչություն ունեն բարձր տեխնոլոգիաների և համացանցի հետ: Նա պրոդյուսեր է ֆրանսիայում գործող Ռիզոմե փրոդաքշնզում (Rhizome Productions): Ապրում է Ստամբուլում: Կացարան (RESIDENCY)2012 Բիշքեք՝ Ղրղստան/2013-2014 Ալմաթի Ղազախստան, 2014-2016 մագիստրատուրայի դասախոս Ալմաթիի գեղարվեստի ուսումնարանում և Ստեյնդեյլ համալսարանի Գրենորլ 3-ում:



Ծրագիրը

Աշխատաժողովը տեխնիկական թրեյնինգներից չէ կազմված, այլ ավելի շուտ ինտենսիվ սեմինարներից, որոնց ընթացքում ամփոփվելու և վերլուծվելու են դիմողների կողմից ներկայացված անհատական նախագծերը:

Մենթորի կողմից համակարգվող մասնակիցները կենտրոնանալու են հետևյալ կետերի վրա՝

- Սուբյեկտ և ձև հարցերի շուրջ խորը ուսումնասիրություն, թրեյնինգներից որևէ մեկի ավելի վաղ գործերի, ինչպես նաև վավերագրական ժառանգությունից ֆիլմերի համատեղ դիտում:
- Անհատական հետազոտական աշխատանք, նախագծի թեմաներին և հարցերին առնչվող ֆիլմերի դիտում և վերլուծություն:
- Թյուլթորների հետ անհատական դասեր՝ վերլուծություններ, պատրաստություն տեղանքների հետախուզության աշխատանքներին, հնարավոր տարբերակների քննություն:
- Նախագիծը նորից գրելու առաջին փուլ
- Փոփոխված աշխատանքների համատեղ և անհատական վերլուծություն
- Նախագծի վերջնական սևագիր տարբերակ, թրեյնինգի մշտական համակարգման ներքո

Կացարանից (residency) հետո

ԵՎՐԱՍԻՈՂՈՔ կացարանի մասնակիցների առաջատար վավերագրական ֆիլմերի նախագծերը հնարավորություն կստանան մասնակցելու համատեղ արտադրության "Tenk" ժողովին, որը տեղի է ունենալու 2015թ. հունիսին, ներկայացնելու իրենց պրոեկտները (pitch) և հանդիպելու եվրոպական ու տեղական պրոդյուսերների, հեռուստահեռարձակողների հետ:

Բ. Մասնակցության պայմանները

Նախագծերը

Նախագծերը, որոնք կմասնակցեն ընտրությանը՝ «Ստեղծագործական վավերագրական» ֆիլմեր պետք է լինեն

«Ստեղծագործական վավերագրական ֆիլմ»։ Ներկայից, անցյալից կամ ապագայից վերաբերող յուրաքանչյուր աշխատանք, որը ուսումնասիրության, վերլուծության կամ գրավոր նյութի թեմա է դարձել, և արտահայտում է հեղինակ-ռեժիսորի անձնական-յուրօրինակ տեսանկյունը:



Մասնակիցները

Աշխատատեղովը նախատեսված է յուրաքանչյուր հեղինակ-կինոգործիչի համար՝

- Այս երկրներից մեկում՝ Հայաստանում կամ Թուրքիայում, կացության կարգավիճակ ունեցող (նվազագույնը 19 տարեկան):
- Որակավորում չի պահանջվում, սակայն առնվազն փորձը ֆիլմարտադրության բնագավառում (պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ) կապված տեսողական նյութի հետ նախընտրելի է (հեռարձակում, լուսանկարչություն, վիզուալ արվեստներ և այլն):
- Նախագծերը կարող են ներկայացվել հեղինակ-ֆիլմարտադրողների կողմից, անկախ նրանից, թե ունեն արդեն պրոդյուսերի աջակցություն, թե ոչ:

Թեկնածուների ընտրությունը

Անավարտ դիմում-հայտերը չեն դիտարկվելու: Ընտրական հանձնաժողովը չի պարզաբանելու իր որոշումը չընտրված մասնակիցներին: Արդյունքները հայտարարվելու են էլեկտրոնային փոստի միջոցով ամենաուշը կացարանում կացության /residency/ սկզբից մեկ ամիս առաջ:

Ծրագրի արժեքը

Հեղինակ-ֆիլմարտադրողների համար, որոնք կացություն են հաստատելու կացարանում ծրագրի մասնակցությունը անվճար է: Այն ներառում է՝

- Գրանցման վճարը,
- Անհրաժեշտ նյութերի տրամադրումը (ֆիլմեր, գրախոսություններ և այլն),
- Անհրաժեշտ նկարահանող սարքավորումների տրամադրումը,
- Տեղական տրանսպորտի, սննդի և կացության ծախսերը,
- Ընտրված մասնակիցների համար այն ծախսերը (հանապարհորդության, առձեռն, հոսթել), որոնք կապված են Հայաստանում TENK համատեղ արտադրության հանդիպումների մասնակցության հետ:



Դիմում-հայտերն ուղարկելու կարգը:

Դիմումները, որոնք ներառում են լրացված հայտը և պահանջվող փաստաթղթերը (ցուցակը կարող եք տեսնել ստորև), պետք է ուղարկել միայն էլեկտրոնային փոստի միջոցով և մինչև **2015 թվականի ապրիլի 23-ի** կեսգիշերը (հայտերի ընդունման վերջնաժամկետ) հետևյալ էլեկտրոնային հասցեով (հայտերը կարող են ուղարկվել թուրքերեն, հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով)

Թուրք Գուլթեքին Ռոշե/ ԵՎՐԱՍԻԱԴՈՔ/ Էքրան Լիբրե
tgultekin@ecranlibre.fr

Անհրաժեշտ փաստաթղթեր

Հայտում տրված հերթականությամբ պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում-հայտ
2. Ֆիլմի սցենարիստ-հեղինակի CV,
3. Ռեժիսորի ծանոթագրություն և/կամ զարգացված սինոփսիս 2-10 էջերի սահմաններում

Կարևոր ծանուցում: Խնդրում ենք ձեր փաստաթղթերի բոլոր էջերի վրա պարզորոշ գրել ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ և ՀԵՂԻՆԱԿԻ ԱՆՈՒՆԸ:



ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

ԵՎՐԱՍԻԱ ԴՈՔ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՍՑԵՆԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախագծի անվանումը:

.....

Ֆիլմի նախատեսվող տևողությունը:

Հակիրճ նկարագրություն (10 տող):

Ծրագրի թեկնածու՝ նախագծի հեղինակ-ֆիլմարտադրող

Ազգանուն:	Անուն:
Ծննդյան տարեթիվ:	Սեռ:
Հասցե:	
Փոստային կոդ, քաղաք:	Երկիր:
Հեռախոս:	Ֆաքս:
Բջջային հեռախոս:	Էլ. փոստ:
Ազգություն:	Մայրենի լեզու:
Այլ լեզու(ներ):	

Ամսաթիվ և ստորագրություն:



Նախագծի հնարավոր պրոդյուսեր:

Ազգանուն:	Անուն:
Ծննդյան տարեթիվ:	Սեռ:
Հասցե:	
Փոստային կոդ, Քաղաք:	Երկիր:
Հեռախոս:	Ֆաքս:
Բջջային հեռախոս:	Էլ. փոստ:
Ազգութիւն:	Մայրենի լեզու:
Այլ լեզու(ներ):	

Ամսաթիվ և ստորագրութիւն:

